

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է ներքին մրցույթ՝ Նախարարության ընդերքի վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.12-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.12-Ղ3-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք **ծանոթանալ կից:**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.12-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
2. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի ապրիլի 7-ից մինչև 2020 թվականի ապրիլի 16-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 9.30-ից 12.30-ը և 14:00-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի մայիսի 8-ին՝ ժամը 15:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի մայիսի 12-ին՝ ժամը 15:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> և <<Աշխատանքային իրավիճակներ>> ձևաչափերով:

Հիմնական աշխատավարձը 310858 (երեք հարյուր տաս հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 5,6,14,34,50,179,180,181,182,183,184,185,186,188,189
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք, հոդվածներ՝ 3,7,9,11,12,13,17,18,20.1,22,30, 32,40,42,46,48,50,51,54,55
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140551>
- ՀՀ հարկային օրենսգիրք, հոդվածներ՝ 4, 8, 183, 184, 196, 198, 203
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140573>
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 5, 6,19, 19.4, 35, 36,37, 39,41
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140700>
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2 - 7, 9, 10, 14, 34, 35
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 15, 20, 30, 35, 50, 52
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 37
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>
- ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 14-ի «Պինդ օգտակար հանաճոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային պաշարների դասակարգումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի փետրվարի 9-ի N 80 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 274-Ն որոշում
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82437>
- ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1480-Ն որոշում
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=79585>
- ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի «Հետախուզված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը հաստատելու մասին» N 1784-Ն որոշում
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13223>

- ԶԶ պաշարների պետական հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 12-ի «Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի արդյունաբերական գնահատման և կոնդիցիաների պարամետրերի հիմնավորման կյութերի բովանդակության, ձևավորման և պետական փորձաքննության ներկայացման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» N 86 որոշում

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20593>

- ԶԶ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի «Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1147-Ն որոշում

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78175>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղաաշյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- «<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, Երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114, 124-126,134,137,142,147-148,198-201

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ԶԶ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝

- «Աշխատակազմի կառավարում» կոմպետենցիա, հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf
- «Որոշումների կայացում» կոմպետենցիա, հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf
- «Խնդրի լուծումը» կոմպետենցիա, հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ԶԶ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ընդերքի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 22-33.12-Ղ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժինների պետերը:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժինների պետերից մեկը:

1.5 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) Ապահովում է ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ու պահպանության պետական ծրագրերի, հայեցակարգերի մշակման աշխատանքները.

2) ապահովում է Վարչության իրավասության սահմաններում ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող, պետական կառավարումն ապահովող նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ընդերքի օգտագործման համար պահանջվող նորմերի, կանոնների ու կարգերի մշակման աշխատանքները.

3) ապահովում է երկրաբանական տեղեկության արժանահավատության գնահատման, օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման և վերագնահատման կյուբերի փորձաքննության իրականացման և համապատասխան կոնդիցիաների պարամետրերի հաստատման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

4) ապահովում է օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների գնահատման ու վերագնահատման արդյունքներով պաշարների հաշվարկման կյուբերի փորձաքննության իրականացման և այդ պաշարների հաստատման կամ վերահաստատման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

5) ապահովում է արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման կյուբերի փորձաքննության իրականացման և համապատասխան եզրակացությունների տրամադրման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

6) ապահովում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

7) ապահովում է Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա հանքային հումքի տեսակների արտահանման և ընդերքի մասին տեղեկատվության արտահանման լիցենզիաների տրամադրման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

8) ապահովում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ ընդերքօգտագործման բնագավառին վերաբերող բաժինների մշակման աշխատանքները.

9) համակարգում է ընդերքօգտագործման բնագավառին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկման և դրանց վերաբերյալ կարծիքների ու առաջարկությունների տրամադրման աշխատանքները.

10) ապահովում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման պետական պատվերի ձևավորման և տեղադրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքների իրականացումը.

11) ապահովում է ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման և հրապարակային հաշվետվությունների ընդունման աշխատանքների իրականացումը.

12) ապահովում է ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության, փաթեթների ամբողջականության ստուգման և դիմումի գրանցման մասին դիմումատուին ծանուցման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

13) ապահովում է նախարարությանը համաձայնեցման ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի քննարկման և համաձայնեցման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

14) ապահովում է նախարարությանը համաձայնեցման ներկայացված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների քննարկման և համաձայնեցման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

15) ապահովում է օգտակար հանածոների արդյունահանման նախագծերի, դրանց փոփոխությունների քննարկման աշխատանքների իրականացումը.

16) ապահովում է ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի և նրանց փոփոխությունների սահմանված կարգով ներկայացումը օրենքով նախատեսված փորձաքննությունների և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման.

17) օրենքով սահմանված մերժման հիմքերի առկայության դեպքում ապահովում է ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումի մերժման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

18) ապահովում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի ճշգրտման աշխատանքների իրականացումը.

19) ապահովում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումին կից՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված՝ կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների ընդունման և վերլուծությունների իրականացման աշխատանքների կատարումը.

20) ապահովում է ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար մրցութային փաթեթի կազմման և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված իրավաբանական անձի հետ նախնական պայմանագրի կնքման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

21) ապահովում է ընդերքօգտագործման իրավունքում փոփոխության, ժամկետի երկարաձգման, ընդերքի տեղամասի ընդլայնման, իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնության, հրաժարման հավաստագրի տրամադրման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

22) ապահովում է ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանի վարման, ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծության ու ամփոփման, ինչպես նաև սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքների իրականացումը.

23) ապահովում է ընդերքօգտագործողին գրավոր զգուշացում տալու և կասեցնելու, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքների իրականացումը.

24) ապահովում է կատարված երկրաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ ներկայացված միջանկյալ հաշվետվությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում պաշարների շարժի տարեկան հաշվետվությունների վերլուծության հիման վրա առաջարկությունների ներկայացումը.

25) ապահովում է ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկատվությունը երեք ամսվա ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հանձնելու գործընթացի վերաբերյալ

առաջարկությունների ներկայացումը.

26) ապահովում է ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառման վերաբերյալ աշխատանքների իրականացումը.

27) ապահովում է Նախարարության պաշտոնական կայքի սպասարկման համար ընդերքի ոլորտին առնչվող տեղեկատվական և վերլուծական կյութերի մշակման աշխատանքների իրականացումը.

28) ապահովում է ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող՝ վարչական վիճակագրական հաշվետվությունների ընդունման, վերլուծության և ամփոփման հիման վրա ստացված արդյունքների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

29) ապահովում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան գերատեսչություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին Նախարարության կողմից ընդերքի ոլորտում տրամադրված թույլտվությունների, ընդերքօգտագործման իրավունքում փոփոխության, ժամկետի երկարաձգման, ընդերքի տեղամասի ընդլայնման, իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնության, հրաժարման հավաստագրի տրամադրման և դադարեցման մասին տեղեկատվության տրամադրման աշխատանքներ:

30) ապահովում է ԱՊՀ և այլ երկրների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ձևավորվող նպատակային համաձայնագրերի, համատեղ ծրագրերի շուրջ տարվող բանակցությունները.

31) ապահովում է ԵԱՏՄ երկրների համագործակցության շրջանակներում ոլորտային օրենսդրական դաշտը ներդաշնակեցնող և ծառայությունների շուկայի ազատականացմանը նպաստող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները

Իրավունքները՝

- Նախարարության ստորաբաժանումներից և այլ գերատեսչություններից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն ու կյութեր, ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, կազմակերպել առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ.

- իրավական ակտերի մշակման համար Նախարարության ստորաբաժանումներից և այլ գերատեսչություններից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն ու կյութեր, ինչպես նաև ստանալ առաջարկություններ և դիտողություններ գործառույթն իրականացնելու նպատակով մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

- երկրաբանական տեղեկության արժանահավատության գնահատման, օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման և վերագնահատման կյութերի փորձաքննության ապահովման և համապատասխան կոնդիցիաների պարամետրերի հաստատման նպատակով հաշվետվության հեղինակներից կամ ընդերքօգտագործող կազմակերպությունից անհրաժեշտության դեպքում պահանջելու ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն, ներկայացված փաստաթղթերի բնօրինակները.

- հաշվետվության հեղինակներից կամ ընդերքօգտագործող կազմակերպությունից անհրաժեշտության դեպքում պահանջելու ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն, ներկայացված փաստաթղթերի բնօրինակները, Նախարարության ստորաբաժանումներից և այլ գերատեսչություններից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր.

- առաջարկություն ներկայացնել փորձաքննության գործընթացին փորձագետներ ներգրավելու վերաբերյալ.

- դիմումատուից պահանջելու ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի լրակազմ փաթեթ.

- ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառման նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.

- սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ ընդերքի ոլորտին վերաբերող բաժինների մշակման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և կյութեր այլ ստորաբաժանումներից, տիրապետել ծրագրերի յուրահատկություններից բխող անհրաժեշտ տեղեկատվությանը.

- իրավական ակտերի մշակման աշխատանքներն ապահովելու համար Նախարարության ստորաբաժանումներից և այլ գերատեսչություններից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն ու կյուլթեր, ինչպես նաև ստանալ առաջարկություններ և դիտողություններ գործառույթն իրականացնելու նպատակով մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.
- երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման պետական պատվերի ձևավորման և տեղադրման վերաբերյալ աշխատանքներն ապահովելու նպատակով ստանալ ծրագրերի յուրահատկություններից բխող անհրաժեշտ տեղեկատվություն.
- ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման և հրապարակային հաշվետվությունների ընդունման աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն ու կյուլթեր Վարչության այլ ստորաբաժանումներից.
- պահանջելու դիմումատուից ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթը համապատասխանեցնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին.
- պահանջելու դիմումատուից Նախարարության համաձայնեցմանը ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերը և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերը ներկայացնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.
- օգտակար հանածոների արդյունահանման նախագծերի, դրանց փոփոխությունների քննարկման արդյունքում ներկայացնել ծանուցման առաջարկություն՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծերում, դրանց փոփոխություններում առկա թերությունների մասին.
- ընդերքօգտագործման նախագծերը, ծրագրերը և նրանց փոփոխությունները օրենքով նախատեսված փորձաքննությունների և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման ներկայացնելու նպատակով պահանջելու դիմումատուից ընդերքօգտագործման նախագծերը, ծրագրերը և դրանց փոփոխությունները ներկայացնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.
- ուսումնասիրել ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, դիմումատուից պահանջել լրակազմ փաթեթ.
- ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի ճշգրտման և առաջարկության ներկայացման նպատակով պահանջելու անհրաժեշտ տեղեկատվություն և կյուլթեր այլ գերատեսչություններից, նախարարության այլ ստորաբաժանումներից.
- պահանջելու դիմումատուից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված՝ կատարված աշխատանքների մասին հաշվետվությունները ներկայացնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.
- ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար միջոցային փաթեթի կազմման նպատակով պահանջելու անհրաժեշտ տեղեկատվություն.
- պահանջելու դիմումատուից ընդերքօգտագործման իրավունքում փոփոխության, ժամկետի երկարաձգման, ընդերքի տեղամասի ընդլայնման, իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնության, հրաժարման հավաստագրի տրամադրման մասին դիմումները և կից փաստաթղթերը ներկայացնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.
- Նախարարության ստորաբաժանումներից և այլ գերատեսչություններից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն ու կյուլթեր՝ գործառույթի լիարժեք իրականացման նպատակով.
- միջնորդագրերի հիման վրա ընդերքօգտագործողին գրավոր զգուշացում տալու և ընդերքօգտագործման իրավունքի կասեցման ու դադարեցման գործընթացի իրականացումն ապահովելու նպատակով Նախարարության ստորաբաժանումներից պահանջելու ներկայացնել համապատասխան փաստաթղթեր.
- կատարված երկրաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ ներկայացված

միջանկյալ հաշվետվությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում պաշարների շարժի տարեկան հաշվետվությունների վերլուծությունն ապահովելու նպատակով պահանջել և ստանալ տեղեկատվություն.

- պահանջելու ընդերքօգտագործողից իրենց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկատվությունը, ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում, երեք ամսվա ընթացքում հանձնելու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ կառավարության կողմից սահմանած կարգին համապատասխան.

- ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումն ապահովելու նպատակով ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն.

- Նախարարության պաշտոնական կայքի սպասարկման համար ընդերքի ոլորտին առնչվող տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակումն ապահովելու նպատակով՝ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման աշխատանքների ապահովում.

- Վարչական վիճակագրական հաշվետվությունների վերլուծությունն ու ամփոփումը ապահովելու համար պահանջել և ստանալ տեղեկատվություն.

- տեղեկատվության տրամադրման աշխատանքներն իրականացնելու նպատակով Վարչության այլ ստորաբաժանումներից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները և նյութերը.

- պահանջելու համաձայնագրերին, համատեղ ծրագրերի շուրջ տարվող բանակցություններին առնչվող տեղեկատվություն նախարարության այլ ստորաբաժանումներից և այլ գերատեսչություններից.

- կազմակերպել առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ, պահանջելու ոլորտային օրենսդրական դաշտը ներդաշնակեցնող և ծառայությունների շուկայի ազատականացմանը նպաստող իրավական ակտերի նախագծերին առնչվող տեղեկատվություն:

Պարտականությունները՝

- ապահովել ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ու պահպանության պետական ծրագրերի, հայեցակարգերի մշակման, ընդերքօգտագործման ոլորտում առկա խնդիրների համակարգային վերլուծությունների և գնահատման աշխատանքների իրականացումը, մշակվող ծրագրերի համապատասխանությունը օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին՝ իրավահարաբերությունների լիարժեք և համապարփակ կարգավորմամբ, պահպանել օրենսդրությամբ և հանձնարարականով նախատեսված ժամկետները.

- ապահովել ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող, ընդերքօգտագործման ոլորտի պետական կառավարումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակումը՝ օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխան, շահագրգիռ պետական մարմիններից ստացված կարծիքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում, ապահովել իրավական ակտերի նախագծերի լրամշակման աշխատանքների իրականացումը, պահպանել օրենսդրությամբ, ինչպես նաև հանձնարարականով նախատեսված ժամկետները.

- ապահովել ընդերքաբանական փորձաքննության ներկայացված նյութերի բովանդակության, լիարժեքության և ձևավորման գնահատումը, նյութերի մանրակրկիտ ուսումնասիրության, դրանցում բացթողումների և սխալների բացահայտման աշխատանքների իրականացումը.

- ապահովել փորձաքննության արդյունքում արվող մասնագիտական եզրակացությունների և առաջարկությունների նախագծերի մշակման, դրանց քննարկման, ճշգրտման աշխատանքների իրականացումը.

- ապահովել Փորձաքննության արդյունքների ամփոփման, պետական ընդերքաբանական փորձաքննության եզրակացության փաթեթի կազմման, եզրակացության փաթեթի՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ առաքման կազմակերպման աշխատանքները.

- ապահովել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի լրակազմության ստուգման՝ տեղամասի ծայրակետային կորոդինատների

ճշգրտման, դիմումատուի ֆինանսական ու տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգման աշխատանքների իրականացումը, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման վերաբերյալ առաջարկության ներկայացման աշխատանքները.

- ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում ապահովել օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը՝ օրենսդրության պահանջներին համապատասխան.

- ապահովել այլ ստորաբաժանումներից ստացված նյութերի ուսումնասիրման, քննարկման և սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակման աշխատանքների իրականացումը.

- ապահովել ներկայացված նյութերի ուսումնասիրման, համապատասխան ստորաբաժանումների հետ քննարկման, իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ օրենսդրությանը համահունչ կարծիքների ու առաջարկությունների տրամադրման աշխատանքները, պահպանել օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև հանձնարարականով նախատեսված ժամկետները.

- ապահովել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման պետական պատվերի ձևավորման համար ուսումնասիրվող տարածքների, խորությունների, երկրաբանական հանույթի մասշտաբների, երկրաբանական ուսումնասիրության մեթոդների, ուսումնասիրման ելթակա օգտակար հանածոների վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացումը՝ միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառելու նպատակով.

- ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծության, ամփոփման և սահմանված ձևաչափով հրապարակման աշխատանքների իրականացումը.

- ապահովել ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթին ներկայացվող՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության, փաթեթների ամբողջականության ստուգման՝ տեղամասի ծայրակետային կորդինատների ճշգրտման, դիմումատուի ֆինանսական ու տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգման աշխատանքների իրականացումը, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- ապահովել Նախարարության համաձայնեցմանը ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի քննարկման, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների համաձայնեցման կամ ծրագրերում առկա թերությունների մասին առաջարկության ներկայացման աշխատանքները, օրենսդրությամբ նախատեսված ժամկետների պահպանումը.

- ապահովել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների քննարկման, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների համաձայնեցման կամ ծրագրերում առկա թերությունների մասին առաջարկության ներկայացման աշխատանքները, օրենսդրությամբ նախատեսված ժամկետների պահպանումը.

- ապահովել օրենսդրությամբ սահմանված ժամկետում օգտակար հանածոների արդյունահանման նախագծերի, դրանց փոփոխությունների փաթեթների ամբողջականության ստուգումը՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.

- օրենքով նախատեսված փորձաքննությունների և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման ներկայացնելու նպատակով պահանջել դիմումատուից ընդերքօգտագործման նախագծերը, ծրագրերը և դրանց փոփոխությունները ներկայացնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- ապահովել ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի կորդինատների ճշգրտման և տարածքն այլ ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնված լինելու մասին հարցումների կատարումը, պահպանել օրենսդրությամբ նախատեսված

ժամկետները.

- ապահովել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված՝ կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների քննարկման, վերլուծության, փաստացի կատարված և աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալների համեմատման իրականացումը, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- ապահովել օրենսդրությամբ սահմանված ժամկետում ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումի և կից փաստաթղթերի քննարկումը, ճշտել մերժման հիմքերի առկայությունը.

- ապահովել ֆոնդային կյուրթերի ուսումնասիրության, տվյալների մշակման, մրցութային փաթեթի կազմման՝ ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար, մրցույթի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները, հողի սեփականատերերի հետ կնքվող նախնական պայմանագրերի, ինչպես նաև օրենսդրության պահանջներին համապատասխան մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված իրավաբանական անձանց հետ նախնական պայմանագրերի պատրաստման աշխատանքները.

- ապահովել ընդերքօգտագործման իրավունքում փոփոխություններ կատարելու համար ներկայացված փաստաթղթերի օրենսդրության պահանջներին համապատասխանության ստուգման, կարծիքների և առաջարկությունների տրամադրման աշխատանքները, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- ապահովել ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանի վարման, ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծության ու ամփոփման և սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքները, տրամադրված, դադարեցված և փոփոխությունների ենթարկված ընդերքօգտագործման իրավունքների փաթեթների հանձնումը «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին՝ հաշվառման համար, պահպանել հանձնարարականով նախատեսված ժամկետների պահպանումը.

- ապահովել միջնորդագրերի հիման վրա ընդերքօգտագործողին գրավոր զգուշացում տալու և ընդերքօգտագործման իրավունքի կասեցման ու դադարեցման գործընթացի մասին առաջարկությունների ներկայացումը.

- ապահովել կատարված երկրաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ ներկայացված միջանկյալ հաշվետվությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում պաշարների շարժի տարեկան հաշվետվությունների վերլուծության հիման վրա առաջարկությունների ներկայացումը.

- ապահովել ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում ընդերքօգտագործողների տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկատվությունը երեք ամսվա ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հանձնելու գործընթացի իրականացումը.

- ապահովել սահմանափակումների ենթակա հանքային հումքի տեսակների արտահանման և ընդերքի մասին տեղեկատվության արտահանման լիցենզիաների տրամադրման մասին առաջարկությունների ներկայացումը.

- ապահովել Նախարարության պաշտոնական կայքի սպասարկման համար ընդերքի ոլորտին առնչվող տեղեկատվական և վերլուծական կյուրթերի, անհրաժեշտության դեպքում ոլորտում իրականացված աշխատանքների լուսաբանման նպատակով համապատասխան տեղեկատվության տրամադրման աշխատանքները.

- ապահովել ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող՝ վարչական վիճակագրական հաշվետվությունների ընդունման, վերլուծության և ամփոփման հիման վրա ստացված արդյունքների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

- ապահովել Նախարարության կողմից ընդերքօգտագործողներին տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ տեղեկատվական կյուրթերի մշակման և գրանցման աշխատանքների կատարումը.

- ապահովել ԱՊՀ և այլ երկրների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ձևավորվող նպատակային համաձայնագրերի ուսումնասիրման, կարծիքների ներկայացման աշխատանքների իրականացումը, անհրաժեշտության դեպքում՝ համատեղ ծրագրերի շուրջ տարվող բանակցությունների կազմակերպումը.

- ծանոթանալ ԵԱՏՄ երկրների՝ ոլորտային իրավական դաշտին, ապահովել համագործակցության շրջանակներում ծառայությունների շուկայի ազատականացմանը նպաստող և ոլորտային իրավական դաշտը ներդաշնակեցնող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԶԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԵ
2	Ոլորտ	ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ	ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԶԱՐԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԶԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
3	Ենթաօլորտ	Երկրաբանություն	Ընդերքաբանություն	Տնտեսագիտություն	Կառավարում և վարչարարություն
4	Մասնագիտություն	Երկրաբանություն	Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	Օգտակար հանածոների հարստացում	Տնտեսագիտություն Կառավարում

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության ամնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ընդերքի օգտագործման և պահպանության երկրաբանների, երկրաֆիզիկոսների և աշխարհագետների աշխատանքների կամ ճարտարագիտության բնագավառում չորս տարվա աշխատանքային ստաժ

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Զաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
5. Բողոքների բավարարում
6. Ժամանակի կառավարում
7. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

9. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: